ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 59 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, գյուղ Շատին 3-րդ փողոց, 6-րդ փակուղի թիվ 4 հասցեում գտնվող քաղաքացի Մոսի Խաչիկի Հովհաննիսյանին և նրա ընտանիքի անդամներին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0040-0017) կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի 13-րդ կետի ա) ենթակետի, և 18-րդ կետի ա) ենթակետի դրույթները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի գյուղ Շատին 3-րդ փողոց, 6-րդ փակուղի թիվ 4 հասցեում գտնվող քաղաքացի Մոսի Խաչիկի Հովհաննիսյանի և նրա ընտանիքի անդամներ՝ Նինա Մոսիի Հովհաննիսյանի (աղջիկը), Աննա Մոսիի Հովհաննիսյանի (աղջիկը), Մուրադ Մոսիի Հովհաննիսյանի (տղան), Արգիշտի Մոսիի Հովհաննիսյանի (տղան) սեփականության իրավունքով պատկանող հողամում (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0040-0017, մակերեսը 0,1732 հա) առկա 96,01ք/մ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառույցը ճանաչել օրինական և բնակելի տան նկատմամբ սեփականատերերի սեփականության իրավունքը (կցվում է անշարժ գույքի հատակագիծը):

2.Ինքնակամ կառույցն օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2024W95UBC:

3.Օրինականացման համար սահմանված վճարը 96,01ք/մ մակերեսով շինության համար կազմում է 60 582,31 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 124 109 հաշվեհամարին:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՒՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. փետրվարի 24 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 60 Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 63-65-րդ կետը, Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10102BLYAPGN ծածկագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նշանակության կոմունալ ենթակառուցվածքներ հողամասին և արտադրական շինություններին (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0120-0002, տարածքը՝ 6,4283հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հերմոն գյուղ, 11-րդ փողոց, 2 վարչական շենք հասցեն:

2.Ձեղյալ համարել նախկինում տրված՝ «Վայոց ձորի մարզ, համայնք Հերմոն 10-րդ փողոց 1» հասցեն:

3.Սույն որոշումը ենթակա է գույքային իրավունքի պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. փետրվարի 24 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 61 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՆՈՐԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 10-ը հունիսի 2008 թվականի «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 117-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի բնակիչ Նորիկ Ռաֆիկի Սարգսյանի (ընտանիքի գլխավորը, ծնված 1963թ.) և նրա ընտանիքի անդամներ՝ Ալվարդ Վահիկի Կարապետյանի (կինը, ծնված 1969թ.), Լուսինե Նորիկի Սարգսյանի (աղջիկը, ծնված 1987թ.), Աննա Նորիկի Սարգսյանի (աղջիկը, ծնված 1989թ.) սեփականության իրավունքը Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ, 3-րդ փողոց, թիվ 8 հասցեում գտնվող 361,5 ք/մ մակերեսով բնակելի տան և օժանդակ կառույցների նկատմամբ (կադաստրային ծածկագիր՝ 10-010-0089-0017, մակերեսը՝ 0,12հա):

2. Կառույցները կառուցվել են մինչև 2001 թվականը:

3.Անշարժ գույքը բավարարում է սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմանները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԼԵՎԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 25 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 62 Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՆԱՐԻԲԵԿ ՍԱՐՈՒԽԱՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵՎ ԽԱՆՈՒՄ ԱՐՍԵՆԻ ՍԱՅԱԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 10042CRLGAB9 քաղվածքը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Նարիբեկ Սարուխանի Սաֆարյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամ՝ հանգուցյալ Խանում Արսենի Սայադյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-010-0016-0016) տրամադրել Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ, 16-րդ փողոց, տուն 2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԷԴԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 26 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 63 Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՄԻՇԱ ՆՈՐԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի 101223VK4PNN քաղվածքը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի Հորս գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Միշա Նորիկի Մաթևոսյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ Անահիտ Մարտունի Շահվերդյանի (կինը), հանգուցյալ Արա Միշայի Մաթևոսյանի (տղան), Արսեն Միշայի Մաթևոսյանի (տղան) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0007-0052) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 7-րդ փողոց, տուն 15/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄՇԱԲՈՒՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 26 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 64 Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԲԵՆԻԱՄԻՆ ԼՅՈՎԱՅԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման՝ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 100126T4BVYR ծածկագիրը, Եղեգիս համայնքի ավագանու 27/01/2025թ. թիվ 6Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Բենիամին Լյովայի Նազարյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0254-0007, մակերեսը՝ 0,255 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 28-րդ փողոց, թիվ 7 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՄԼԵՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 26 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 65 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի դրույթները, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10122FAUXXWP ծածկագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0007-0059, հողամասի չափը՝ 0.00685հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված 27,77ք/մ ընդհանուր մակերեսով ավտոտնակը և ծածկը համարել Եղեգիս համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը):

2.Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2024BQZECG:

3.Անշարժ գույքին տալ ՀՀ Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք, գ. Հորս 7-րդ փողոց, թիվ 15/3 հասցեն:

4.Առաջարկել Եղեգիս համայնքի ավագանուն սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված շինությունները և 0.00685 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած քաղաքացի Արսեն Միշայի Մաթևոսյանին, և առաջարկել նրան.

ա) Վճարելու ինքնակամ կառուցված 27,77քմ ընդհանուր մակերեսով շինությունների համար՝ ընդամենը 29 694,4 (քսանինը հազար վեց հարյուր իննսունչորս ամբողջ չորս

տասնորդական) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված 35-րդ կետի գ) և դ) ենթակետերի դրույթները:

բ)Վճարելու 0.00685հա բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողատեսքի արժեքը՝ 9720,15 ՀՀ դրամ (68,5քմ.x141,9դր. = 9720,15 դր.), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված 35-րդ կետի ե) ենթակետի դրույթները:

գ)Վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5.Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

6.Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.00685հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. փետրվարի 26 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 66 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ, ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆԱՀԻՏ ՄԻՇԱՅԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Ընտանեկան օրենսգրքի>> 109-111-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 14/02/2025 թվականի եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղեգիս համայնքի Հորս գյուղի բնակչուհի, անչափահաս Անահիտ Միշայի Մովսեսյանին (ծնված 06/05/2022 թվականին) ճանաչել որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՏԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 26 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թվականի N 67 Ա

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՐԿՆԱԿԻ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի 27.02.2025թ. N1 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» N13-Ն հրամանի 82-րդ մասը, ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել կրկնակի մրցույթ՝
   աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-7):
2. Կրկնակի մրցույթի օր նշանակել 2025 թվականի մարտի 6-ը, ժամը 15:30-ին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՇՈՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
2025 թ. փետրվարի 28 ք.Եղեգիս